ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՏԿԵՆ-ՀՄԱ-ԱՇՁԲ-2019/17Շ

ք. Երևան **«30» սեպտեմբերի 2019թ.**

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղարին փոխարինող Հ. Բատիկյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Կապալառու>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Աբաղյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 65 օր հետո, բայց ոչ ուշ, քան 2019 թ. դեկտեմբերի 10-ը:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 75 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 3 տարի: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են պայմանագրի N – Հավելվածում:[27]

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 4):

4.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.3 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.4 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

4.5 Եթե պայմանագրի 4.4 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.4 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կապալառուին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը

---

[26] *Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե գնման առարկա հանդիսացող շինարարական ծրագիրը պահանջում է նախագծային փաստաթղթեր:*

[27] *Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե կիրառելի չէ:*

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 634 270 000 (վեց հարյուր երեսունչորս միլիոն երկու հարյուր յոթանասուն հազար) ՀՀ դրամ, որից 105 711 667 (մեկ հարյուր հինգ միլիոն յոթ հարյուր տասնմեկ հազար վեց հարյուր վաթսունյոթ) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԿԾ, որտեղ՝

ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է[30] .

ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.

ԿԾ-ն տվյալ կատարողական ակտով ներկայացված աշխատանքների ծավալն է գումարային արտահայտությամբ.

ՎԳ-ն նախահաշվով սահմանված աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական)

---

[28] *Եթե Կապալառուի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս սույն կետից հանվում են «որից -- ------ (---------) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն» բառերը:*

[30] *Եթե պայմանագրում ներառված են 1-ից ավելի չափաբաժիններով ներկայացված գնման առարկաներ,ապա ՄԳ-ն պայմանագրի 5.1 կետում նշված՝ համապատասխան չափաբաժնի գինն է:*

տոկոսի չափով:[31] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը[32]:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

---

[31] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*
Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

[32] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է ենթակապալի պայմանագիր կնքելու միջոցով.

1) Կապալառուն պատասխանատվություն է կրում ենթակապալառուի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում ենթակապալառուի փոփոխման դեպքում Կապալառուն գրավոր տեղեկացնում է Պատվիրատուին՝ տրամադրելով ենթակապալի պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում:[33]

8.7 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.8 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.9 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.10 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.11 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.12 Սույն պայմանագիրը կազմված է 7 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.13 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

---

[33] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում ենթակապալի պայմանագիր կնքելու միջոցով:*

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ տարածքայի կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	<<Կապավոր>> ՍՊԸ
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,	ԼՂՀ Ստեփանակերտ, Աջափնյա 2
ՀՀ կենտրոնական գանձապետարան	«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
ՀՎՀՀ 02578338	Հ/Հ 163008123412
Հ/Հ 900011025823	ՀՎՀՀ 90003442
_____	_____
/ստորագրություն/	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ.

Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված թիվ 1
« 30 » սեպտեմբերի 2019թ. կնքված
ՏԿԵՆ-ՀՄԱ-ԱՇՁԲ-2019/17Շ *ծածկագրով պայմանագրի*

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

Մ-16, Մ-4 – Ոսկեպար – Նոյեմբերյան - Մ-6 միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ29+000-կմ35+800 հատվածի հիմնանորոգման աշխատանքների

(ՀՀ հազ. դրամ)

ՀՀ	Աշխատանքների անվանումը	Չափ. միավ.	Քանակը	Միավորի արժեքը*	Ընդհանուր արժեքը
1	2	3	4	5	6
I.	**Ճանապարհային պատվածք**				
Ա.	**I տիպ ՊԿ0+00-ՊԿ2+40; ՊԿ28+94-ՊԿ55+80 տեղամասերում**				
1	Գոյություն ունեցող ա/բետոնե պատվածքի վերօգտագործում սառը վերամշակման եղանակով հմիջ.=20սմ, ցեմենտի ավելացումով 1մ²-16կգ	մ²	21491	2.849	61 227.859
2	Տաք, ծակոտկեն, խոշորահատիկ ա/բետոն h=6սմ	մ²	21491	6.272	134 791.552
3	Տաք մանրահատիկ ա/բետոն „Բ"տիպ h=4սմ	մ²	21491	4.703	101 072.173
Բ.	**II տիպ ՊԿ2+40-ՊԿ28+94; ՊԿ55+80-ՊԿ68+86 տեղամասերում**				
1	Գոյություն ունեցող ա/բետոնե պատվածքի ֆրեզավորում h=5սմ	մ²	29498	0.708	20 884.641
2	Փոսային նորոգում „Բ" տիպ h=3-5սմ (հմիջ=4սմ)	մ²	1200	5.599	6 718.800
3	Փոսային նորոգում „Բ" տիպ h=5-12սմ (հմիջ=8.5սմ)	մ²	2400	11.880	28 512.000
4	Փոսային նորոգում հիմքով				
ա.	Չափազատված խիճ h=12սմ բիտումի տարածումով, 4.12տ/1000մ²	մ²	950	3.292	3 127.400
բ.	Տաք, ծակոտկեն, խոշորահատիկ ա/բետոն h=6սմ	մ²	950	6.272	5 958.400
5	Հարթեցնող շերտ տաք, մանրահատիկ ա/բետոնից „Բ" տիպ հմիջ.=3սմ-50%	տոն	1070.4	48.096	51 481.958
6	Տաք մանրահատիկ ա/բետոն „Բ"տիպ h=5սմ	մ²	30367	5.891	178 891.997
				1.Ընդամենը	**592 666.780**
II.	**Կողնակներ**				
1	Կողնակների մաքրում բուսածածկույթից մեխանիզմով ,բարձում էքսկավատորով (0,65մ³), տեղափոխում լցակույտ 2,0կմ	մ²	7987	0.112	894.544
2	Կողնակների ամրացում կոպճային խառնուրդով h=10սմ	մ²	15974	0.658	10 510.892
				2.Ընդամենը	**11 405.436**
III.	**Կողային առուներ**				
1	Կողային առուների ակոսահանում մեխանիզմով	մ³	1830	2.311	4 229.130
				3.Ընդամենը	**4 229.130**
IV.	**Մայթեր**				
1	Գոյություն ունեցող մայթերի վրայի հողի մաքրում ձեռքով, բարձում և տեղափոխում լցակույտ 2.0կմ	մ³	85.3	4.289	365.852
2	Գոյություն ունեցող մայթերի ա/բ ծածկի քանդում և բարձում ձեռքով, տեղափոխում լցակույտ 2.0կմ	մ²	2159.3	0.131	282.868

3	Բազալտե եզրաքարերի քանդում (վերադարձ սեփականատիրոջը)	գծ.մ	163	1.079	175.877
4	Գոյություն ունեցող բազալտե եզրաքարերի քանդում և նորից տեղադրում	գծ.մ	116	5.553	644.148
5	Նոր բազալտե եզրաքարերի տեղադրում 15x30սմ չափսի բետոնե հիմքի վրա	գծ.մ	255	14.934	3 808.170
6	Մայթերի խճային հիմք h=12սմ	մ^2	131.25	1.997	262.106
7	Ավազահատիկ ա/բետոն h=3սմ	մ^2	2275.87	3.802	8 652.858
8	Միաձույլ բետոնե եզրաշար 10x20սմ B-15	մ^3	15.44	64.497	995.834
				4.Ընդամենը	**15 187.713**
V.	**Ուղիներ**				
1	Ավազակոպճային շերտ նոր տեղադրվող խողովակների տակ h=10սմ	մ^3	3.00	5.940	17.820
2	Մետաղական խողովակների տեղադրում d=325.մմ; 1գծ.մ=39.5կգ; δ=5մմ	գծ.մ	21.5	30.4	653.944
3	Նոր տեղադրվող խողովակների և գոյություն ունեցող խողովակների գլխադիրների իրականացում միաձույլ բետոնից B15	մ^3	4.28	112.10	479.788
4	Խողովակի ջրամեկուսացում երկշերտ տաք բիտումով	մ^2	21.94	1.756	38.527
5	Ավազակոպճային շերտ h=10սմ	մ^2	599	0.544	325.856
6	Չափազատված խիճ h=12սմ բիտումի տարածումով, 4.12տ/1000մ^2	մ^2	2146.0	3.187	6 839.302
7	Մանրահատիկ ա/բետոն „Բ"տիպ h=4սմ	մ^2	2582.0	4.653	12 014.046
				5.Ընդամենը	**20 369.283**
VI.	**Մուտքեր**				
1	Ավազակոպճային շերտ նոր տեղադրվող խողովակներիի տակ h=10սմ	մ^3	2.50	5.940	14.850
2	Մետաղական խողովակների տեղադրում d=325.մմ; 1գծ.մ=39.5կգ; δ=5մմ	գծ.մ	15.5	30.416	471.448
3	Նոր տեղադրվող խողովակների և գոյություն ունեցող խողովակների գլխադիրների իրականացում միաձույլ բետոնից B15	մ^3	2.25	112.1	252.225
4	Խողովակի ջրամեկուսացում երկշերտ տաք բիտումով	մ^2	15.82	1.76	27.780
5	Չափազատված խիճ h=12սմ բիտումի տարածումով, 4.12տ/1000մ^2	մ^2	1915.0	3.187	6 103.105
6	Մանրահատիկ ա/բետոն „Բ"տիպ h=4սմ	մ^2	3070	4.653	14 284.710
				6.Ընդամենը	**21 154.118**
VII.	**ՊԿ63+12; ՊԿ66+45 ուղիներում և ՊԿ58+80 մուտքում վաքերի վրա մետաղական ճաղաշարի իրականացում**				
1	ՊԿ63+12 ուղու վաքի վրայի 50x50x5մմ անկյունակների հեռացում	տոն	0.0151	52.45	0.792
2	ՊԿ66+45 և ՊԿ58+80-ում վաքերի վրայի AIIIØ22մմ ամարանաձողերի հեռացում	տոն	0.1003	52.45	5.261
3	Գոյություն ունեցող վաքերի վրա (d=530մմ մետաղական կիսախողովակներ) մետաղական ճաղաշարի իրականացում				
	Անկյունակների տեղադրում L50x50x5մմ, 1գծ.մ-3.77կգ	գծ.մ	87.9	3.13	274.863
	Շվելեր N12-1գծ.մ 10.4կգ	գծ.մ	77.9	8.83	687.468
	Պողպատե թիթեղ -150x150x10մմ	տոն	0.1581	862.26	136.323
	Ամրան AIIIØ12մմ	տոն	0.04794	673.84	32.304

				7.Ընդամենը	1 137.010
VIII.	**Մետաղական խողովակներ (պատյաններ ոռոգման ջրերի համար)**				
1	Մետաղական խողովակների տեղադրում d=159.մմ; 1գծ.մ=15.3կգ; δ=4մմ-8տեղ	գծ.մ	70	11.853	829.710
2	Նույնը d=273մմ; 1գծ.մ=26.5կգ; δ=4մմ	գծ.մ	18.6	20.752	385.987
3	Խողովակի ջրամեկուսացում երկշերտ տաք բիտումով	մ^2	50.87	1.757	89.379
				8.Ընդամենը	1 305.076
IX.	**Երթևեկելի մասի ջրահեռացման և ջրթողման վաքեր**				
Ա.	**Երկայնական վաքեր**				
.	Խճային շերտ երկայնական վաքերի տակ h=8սմ	մ^3	8.16	13.783	112.469
.	Ճ-2-20 հավաքովի վաքերի տեղադրում	հատ	204	13.660	2 786.640
Բ.	**Ջրնետ կողնակի վրա**				
.	IV կարգի գրունտի մշակում և բարձում ձեռքով, տեղափոխում լցակույտ 2.0կմ	մ^3	9	7.315	65.835
.	Խճային շերտ	մ^3	4.4	8.32	36.590
.	Միաձույլ բետոն B-15	մ^3	1.12	50.30	56.332
.	Ճ-4-20 հավաքովի բլոկների տեղադրում	հատ	15	7.77	116.610
.	Ճ-5 հավաքովի բլոկների տեղադրում	հատ	16	17.94	287.104
Գ.	**Վաք լիցքի շեպով**				
.	IV կարգի գրունտի մշակում և բարձում ձեռքով, տեղափոխում լցակույտ 2.0կմ	մ^3	6.75	7.32	49.403
.	Ավազակոպճային շերտ մետաղական կիսախողովակների տակ h=10սմ	մ^3	3	5.94	17.820
.	Նոր մետաղական կիսախողովակի տեղադրում d=530մմ; 1գծ.մ=45.15կգ; δ=7մմ /տես գծագիր/	գծ.մ	42.5	35.37	1 503.310
.	Կիսախողովակների ջրամեկուսացում երկշերտ տաք բիտումով	մ^2	70.73	1.756	124.202
.	Խարսխաձողեր AIIIØ16մմ	կգ	63.12	0.59	37.115
.	Միաձույլ բետոն B15	մ^3	0.18	53.90	9.702
.	Քարե սալարկում	մ^2	8	5.00	40.000
				9.Ընդամենը	5 243.132
X.	**Ջրթող խողովակների մաքրում և վերականգնում**				
1	Տարբեր բացվածքների գոյություն ունեցող ջրթող խողովակների մուտքի և ելքի մասերում մաքրում ձեռքով, բարձում և տեղափոխում լցակույտ 2.0կմ	մ^3	149	7.316	1 090.084
2	d=0.75մ ե/բ խողովակի գլխադիրի իրականացում միաձույլ բետոնով B15	մ^3	1.2	112.075	134.490
3	Նույնը d=1.0մ ե/բ խողովակների համար	մ^3	5.52	112.075	618.654
4	Նույնը d=1.5մ ե/բ խողովակների համար	մ^3	1.6	112.075	179.320
				10.Ընդամենը	2 022.548
XI.	**Վաքեր**				
1	Գոյություն ունեցող d=530մմ տրամագծով մետաղական և ասբեստե կիսախողովակների /վաքերի/ մաքրում ձեռքով, բարձում և տեղափոխում լցակույտ 2.0կմ /վաքերի մեջ և արտաքին եզրում/	մ^3	49.5	7.316	362.142
				11.Ընդամենը	362.142
XII.	**Մետաղական բազրիքներ**				
1	Գոյություն ունեցող մետաղական բազրիքների ներկում	տոն	2.254	18.97	42.767
				12.Ընդամենը	42.767

XIII.	**Մետաղական խողովակ d=1420մմ ՊԿ19+80**				
1	III8վ գրունտի մշակում և բարձում էքսկավատորով (0.65մ³), տեղափոխում լցակույտ 2.0կմ	մ³	70.0	1.458	102.060
2	Նույնը տեղում կուտակումով հետադարձ լիցքի համար	մ³	480.0	0.489	234.720
3	Ավազակոպճային շերտ h=10սմ	մ³	5.9	5.957	35.146
4	Մետաղական խողովակների տեղադրում d=1420.մմ; 1գծ.մ=348կգ; δ=10մմ	գծ.մ	26.8	268.290	7 190.172
5	Գլխադիրի միաձույլ բետոն B15	մ³	8.12	112.070	910.008
6	Գլխադիրի թևերի միաձույլ բետոն B12.5	մ³	3.89	62.887	244.630
7	Վաքի միաձույլ բետոն B12.5	մ³	2.33	75.240	175.309
8	Ատամի միաձույլ բետոն B12.5	մ³	2.45	75.240	184.338
9	Խողովակի ջրամեկուսացում երկշերտ տաք բիտումով	մ²	119.5	1.756	209.842
10	Հետադարձ լիցք	մ³	480.0	0.096	46.080
				13.Ընդամենը	**9 332.306**
XIII.	**Մետաղական խողովակ d=1020մմ ՊԿ39+54**				
1	III8վ գրունտի մշակում և բարձում էքսկավատորով (0.65մ³), տեղափոխում լցակույտ 2.0կմ	մ³	120.0	1.458	174.960
2	Նույնը տեղում կուտակումով հետադարձ լիցքի համար	մ³	840.0	0.489	410.760
3	Ավազակոպճային շերտ h=10սմ	մ³	4.94	5.957	29.428
4	Մետաղական խողովակների տեղադրում d=1020մմ; 1գծ.մ=249կգ; δ=10մմ	գծ.մ	38.0	186.029	7 069.102
5	Խողովակների ջրամեկուսացում երկշերտ տաք բիտումով	մ²	121.71	1.756	213.723
6	Գլխադիրի միաձույլ բետոն B15	մ³	5.62	112.070	629.833
7	Գլխադիրի թևերի միաձույլ բետոն B12.5	մ³	2.16	62.887	135.836
8	Գլխադիրի ջրամեկուսացում երկշերտ տաք բիտումով	մ²	10.92	1.206	13.170
9	Վաքի միաձույլ բետոն B12.5	մ³	0.95	75.240	71.478
10	Ատամի միաձույլ բետոն B12.5	մ³	1.58	75.240	118.879
11	Հետադարձ լիցք	մ³	840.0	0.096	80.640
12	Գոյություն ունեցող խողովակի քանդում,բարձում էքսկավատորով (0.65մ3), տեղափոխում լցակույտ 2.0կմ	մ³	90.0	2.516	226.440
				14.Ընդամենը	**9 174.248**
XV.	**Թեքուղիներ**				
1	Բազալտե եզրաքարերի քանդում (վերադարձ սեփականատիրոջը)	գծ.մ	20.0	1.079	21.580
2	Նոր բազալտե եզրաքարերի տեղադրում 15x30սմ չափսի բետոնե հիմքի վրա հետիոտն անցումներում	գծ.մ	44.0	14.935	657.140
				15.Ընդամենը	**678.720**
XVI.	**Ճանապարհի կահավորում**				
Ա.	**Ճանապարհային նշանների տեղադրում**				
	Նախազգուշացնող	հատ	13	49.253	640.289
	Առավելության	հատ	38	54.351	2 065.338
	Հատուկ թելադրանքի (մեկ սյան վրա 2 նշան)	հատ	36	42.580	1 532.880
	Տեղեկատվության	հատ	8	35.244	281.952
Բ.	**Արգելափակոցներ**				
.	Գոյություն ունեցող ե/բ ազդանշանային սյուների ներկում/37հատ/	մ²	21.31	1.082	23.057
	Ե/բ նոր ազդանշանային սյուների տեղադրում	հատ	191.0	13.830	2 641.530
.	Գոյություն ունեցող մետաղական արգելափակոցների ներկում	տոն	23.0	18.969	436.287

Գ.	**Երթևեկելի մասի նշագծում , լուսանդրադարձիչ գնդիկների օգտագործմաբ 0.35կգ-1մ²**				
	1.1	կմ	0.811	141.115	114.444
	1.5	կմ	5.218	59.764	311.849
	1.6	կմ	0.857	114.017	97.713
	1.8	կմ	0.246	86.927	21.384
	1.2.1	կմ	5.094	249.599	1 271.457
	1.2.2	կմ	8.412	90.338	759.923
	1.14.1	մ²	113.92	2.126	242.194
				16.Ընդամենը	**10 440.297**
				Ընդհանուրը	**704 750.707**

*Միավորի արժեքը ներառում է բոլոր ծախսերը, ներառյալ «Շահույթը» ՝ 11% և ԱԱՀ-ն՝ 20%

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տարածքայի կառավարման և
ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀՎՀՀ 02578338
Հ/Հ 900011025823

/ստորագրություն/
Կ.Տ

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

<<Կապավոր>> ՍՊԸ
ԼՂՀ Ստեփանակերտ, Աջափնյա 2
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Հ/Հ 163008123412
ՀՎՀՀ 90003442

(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված թիվ 2
« 30 » սեպտեմբերի 2019թ. կնքված
ՏԿԵՆ-ՀՄԱ-ԱՇՁԲ-2019/17Շ ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

Մ-16, Մ-4 – Ոսկեպար – Նոյեմբերյան - Մ-6 միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ29+000-կմ35+800 հատվածի հիմնանորոգման աշխատանքների կատարման

No	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		սկիզբը	ավարտը
0	Լաբորատոր փորձարկումներ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 65 օր հետո, բայց ոչ ուշ, քան 2019 թ. դեկտեմբերի 10-ը
1	Ճանապարհային պատվածք	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 50 օր հետո, բայց ոչ ուշ, քան 2019 թ. դեկտեմբերի 10-ը
2	Կողնակներ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 50 օր հետո, բայց ոչ ուշ, քան 2019 թ. դեկտեմբերի 10-ը
3	Կողային առուներ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 30 օր հետո, բայց ոչ ուշ, քան 2019 թ. դեկտեմբերի 10-ը
4	Երթևեկելի մասի ջրահառացման և ջրթողման վաքեր	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 35 օր հետո, բայց ոչ ուշ, քան 2019 թ. դեկտեմբերի 10-ը
5	Մուտքեր	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 50 օր հետո, բայց ոչ ուշ, քան 2019 թ. դեկտեմբերի 10-ը
6	Մայթեր	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 45 օր հետո, բայց ոչ ուշ, քան 2019 թ. դեկտեմբերի 10-ը
7	Ուղիներ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 50 օր հետո, բայց ոչ ուշ, քան 2019 թ. դեկտեմբերի 10-ը
8	Ուղիներում և մուտքերում մետաղական ճաղաշարի իրականացում	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 25 օր հետո, բայց ոչ ուշ, քան 2019 թ. դեկտեմբերի 10-ը
9	Մետաղական խողովակներ (պատյաններ ոռոգման ջրերի համար)	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 20 օր հետո, բայց ոչ ուշ, քան 2019 թ. դեկտեմբերի 10-ը
10	Ջրթող խողովակների մաքրում և վերականգնում	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 15օր հետո, բայց ոչ ուշ, քան 2019 թ. դեկտեմբերի 10-ը
11	Մետաղական խողովակների տեղադրում	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 25 օր հետո, բայց ոչ ուշ, քան 2019 թ. դեկտեմբերի 10-ը
12	Թեքուղիների կառուցում	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 45 օր հետո, բայց ոչ ուշ, քան 2019 թ. դեկտեմբերի 10-ը

13	Ճանապարհի կահավորում	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 65 օր հետո, բայց ոչ ուշ, քան 2019 թ. դեկտեմբերի 10-ը
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ		**Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո**	**Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 65 օր հետո, բայց ոչ ուշ, քան 2019 թ. դեկտեմբերի 10-ը**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տարածքայի կառավարման և
ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀՎՀՀ 02578338
Հ/Հ 900011025823

(ստորագրություն)
Կ.Տ

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

<<Կապավոր>> ՍՊԸ
ԼՂՀ Ստեփանակերտ, Աջափնյա 2
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Հ/Հ 163008123412
ՀՎՀՀ 90003442

(ստորագրություն)
Կ.Տ.

*** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա <<Սկիզբը>> սյունակում ժամկետի մեկնարկը նշվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրը:*

Հավելված N 3
« 30 » սեպտեմբերի 2019թ. կնքված
ՏԿԵՆ-ՀՄԱ-ԱՇՁԲ-2019/17Շ ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Մ-16, Մ-4 – Ոսկեպար – Նոյեմբերյան - Մ-6 միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ29+000-կմ35+800հատվածի հիմնանորոգման աշխատանքների

(ՀՀ դրամ)

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Գնման ենթակա աշխատանքների անվանումը	Աշխատանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում*												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը տարի
1	45231177/44	Մ-16, Մ-4 – Ոսկեպար – Նոյեմբերյան - Մ-6 միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ29+000-կմ35+800հատվածի հիմնանորոգման աշխատանքներ	-	-	-	-	-	-	-	-	-	634 270 000	634 270 000	634 270 000	**634 270 000**

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*
*** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տարածքայի կառավարման և
ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀՎՀՀ 02578338
Հ/Հ 900011025823

(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

<<Կապավոր>> ՍՊԸ
ԼՂՀ Ստեփանակերտ, Աջափնյա 2
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Հ/Հ 163008123412
ՀՎՀՀ 90003442

(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված թիվ 4
« » 2019թ. կնքված
ՏԿԵՆ-ՀՄԱ-ԱՇՁԲ-2019/17Շ *ծածկագրով պայմանագրի*

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
_____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
« » 2019թ. կնքված
ՏԿԵՆ-ՀՄԱ-ԱՇՁԲ-2019/17Շ *ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն